# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵՑ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

Օգոստոսի 14-ին, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայ Առաքելական Եկեղեցում Անգլիկան Եկեղեցու Քենթրբերիի Արքեպիսկոպոսության ներկայացուցիչ Հ. Ֆիլիպ Սթորր Վենթերի՝ Հայաստանից մեկնման հրաժեշտի երեկոն: Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններն ու աշխատակազմի ներկայացուցիչները:

Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը՝ անդրադառնալով Հայ և Անգլիկան Եկեղեցիների հարաբերություններին ու կապերին և դրանց ամրապնդմանը նպաստած Հ. Ֆիլիպի վեցամյա արդյունավոր գործունեությանը: Սրբազան Հայրն իր խոսքում նշեց, որ անցնող վեց տարիների ընթացում Հ. Ֆիլիպը կազմակերպել է երջանկահիշատակ Գարեգին Ա-ի պաշտոնական այցելությունը Անգլիա, Քենթրբերիի Արքեպիսկոպոսի այցելությունը Հայաստան՝ 1700-ամյակի առիթով, երկու երկրների բանակներում ծառայող հոգևորականների փոխադարձ այցելություններն ու հանդիպումները և Մայր Աթոռի երիտասարդ միաբանների ուսումն Անգլիայի աստվածաբանական համալսարաններում:

Ի գնահատություն Հ. Ֆիլիպի ծառայությունների, Հայրապետական սրբատառ Կոնդակով նրան շնորհվեց Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան (տե՛ս էջ 27): Հավարտ հանդիսության Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքը հղեց ներկաներին՝ բարձր գնահատելով Հ. Ֆիլիպի վեցամյա գործունեությունը Հայաստանում և նրա մատուցած ծառայությունները երկու Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների ամրապնդման գործում:

Հանդիսությանը երաժշտական համարների կատարմամբ հանդես եկավ Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի «Լուսավորիչ» երգչախումբը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*